

## Հարցարան

- 1. Անհրաժեշտության դեպքում կետերի փոխարեն լրացրո՛ւ համապատասխան տառերը:**

Ժամանակին մի խենթ մարդ էր ապրում, որը սիրում էր շրջել քաղաքի սակավամար...  
արվարձաններում: Մի օր նա հանդիպում է մի տար...րինակ մուրացկանի: Սա երիտասարդ  
թա...ավորն էր, որը, ծանծրանալով պալատական տա...տկալի և միօրինակ կյանքից, իր  
ստորաքա...<sup>2</sup> դրանիկներից, մուրացկանի շորեր հա...ած, թափառում էր փողոցներում:  
Ծպտված արքան մոտենում է խենթին և ողորմություն խնդրում: Խենթը կես նկանակ է հանում  
բա...կոնի գրպանից: Հացի հետ՝ նաև պանիր:  
-Ինձ թվում է՝ դու մեր թա...ավորն ես,- ասում է խենթ մարդը:  
Թա...ավորին դուր են գալիս խենթի ու...ամտությունը և խորաթափանցությունը, նա մի  
կողմ է նետում ցնցոտիները, և հայտնվում է պ...նված արքան: Խենթը մի պահ ակ...նդետ ու  
սևեռում նայում է, հետո.....
- 2. Տեքստից գտի՛ր և դո՛ւրս գրի՛ր հոմանիշ բառերի զույգեր (5 զույգ):**
- 3. Տեքստի ո՞ր բառերի բացատրությունն են տրված բառակապակցությունները:**

Քաղաքի ծայրամաս  
Պալատական պաշտոնյա  
Կլոր հաց, բլիթ  
Քծնող, շողոքորթ մարդ  
Ջուզվել և գարդարվել  
Արտաքինը, հագուստը փոխելով՝ թաքնվել
- 4. Տրված բառերը տեքստի ո՞ր բառերի հականիշներն են:**

Սովորական, բազմամբոխ, հրամայել, խարդախություն, հետաքրքիր, ակեհեր:
- 5. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրի՛ր *-ավոր* վերջածանցով մեկ գոյական բառ: Այդ ածանցով երեք ածական բառ կազմիր:**
- 6. Տեքստում գտի՛ր բարդ ածանցավոր մեկ բառ. վերլուծի՛ր բառակազմորեն, դրա արմատներով կազմի՛ր մեկական ուրիշ բառ:**
- 7. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրի՛ր երեք բառ, որոնց մեջ *է(ե)* ձայնավորը հնչյունափոխվել, դարձել է */չ/*: Վերականգնի՛ր անհնչյունափոխ ձևերը:**
- 8. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրի՛ր մեկ բառ, որի արմատներից մեկը *աչք* բառի իմաստ ունի: Այդ արմատով կազմի՛ր ուրիշ 4 բառ:**
- 9. Տեքստում գտի՛ր մեկ գոյական, որի հոգնակի ձևը չի կազմվում *-եր* կամ *-ներ* վերջավորություններով: Այդ գոյականի հոգնակին գործածի՛ր հետևյալ կառուցվածքն ունեցող բառակապակցությունների մեջ՝**

ածական+գոյական  
գոյական (սեռական հոլով)+ գոյական  
բայ + գոյական (հայցական հոլով)  
գոյական (բացառական հոլով) + բայ
- 10. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրի՛ր անձնական երկու դերանուն: Կազմի՛ր նախադասություններ՝ այդ դերանունները գործածելով *համար, նման, մոտ* կապերի հետ (6 նախադասություն):**
- 11. Տեքստում գտի՛ր այն նախադասությունը, որում կան հարադրավոր երկու բայ: Այդ բայերը դո՛ւրս գրի՛ր, ապա առանձին-առանձին գործածի՛ր նախադասությունների մեջ հետևյալ ձևերով (6 նախադասություն).**

ա) սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակածև  
բ) սահմանական եղանակի անկատար ներկայի ժխտական ձևը  
գ) պայմանական եղանակի ապառնի ժամանակածև
- 12. Գրի՛ր հեքիաթի ավարտի քո տարբերակը (7-10 նախադասություն):**